

Սիրելի՛ բարեկամ,

Սուրբ յարութեան տօնն է՝ յարութեան յոյսին տօնը: Յարութեան տեսիլքով Մահը յաղթահարելու, երկնային արքայութեան մխիթարանքով յաւիտ բաժանումի կսկիծը մեղմելու տօնն է, բայց... Սուրբ տեղանքը կրկին թատերաբեմ է արինահեղութեան, ցաւի, քանդումի. «Սպաննէ՛ գայն, խաչը հանէ՛ զինք» (Յովի. ԺԹ. 15) գոռացող ամբոխին այսօրուայ յետնորդները նոյն կոյրութեամբ, նոյն մոլագարութեամբ, նոյն ատելութեամբ կը սպաննեն ու կը յօշոտեն, չանգիտանալով (արդեօք...), որ իրենց վայրագութեամբ կը խողխողեն նաեւ յոյսը, խաղաղութեան երազը:

Երուսաղէմ, նոր հերովդէսներու գործադրած մանուկներու ջարդին արինով ոռոգեցիր երկիրդ, անոնց ողբով լեցուցիր երկինքը՝ խլացնել փորձելով յափտենական կեանքի անտիսը դժուանքող զանգերուն զանգինը:

Սակայն Գողգոթայի խաչէն բացակայ յարուցեալ տէրը, որ «Մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբն իյրով մեզ զկեանս պարգեւեաց» (Ժամագիրք), կ'ողջունէ մեզ ամէն վիճակի մէջ ըսելով. «Խաղաղութիւն ձեզի: Ես եմ մի վախճաք» (Ղուկ. ԻԴ. 36):

Թող օրինեալ ըլլայ Սուրբ յարութիւնը մեր կեանքին մէջ:

Ա. Խորհրդ.

ՌԱՖՖԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ 11.700 ՏՈԼԱՐ ՅԱՏԿԱՑՈՒՑ ԻՐ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ԿՐԹԱՆԱԿԱՍՏԻՆ ՂՐԿԵԳ

Դպրոցի բարերար լոնտոնաբնակ տիար Ռաֆֆի Մանուկեան 2023-2024 տարուայ իր անունը կրող կրթանապաստին ղրկեց 11.700 տոլար, որմէ 18 աշակերտներ կ'օգտուին:

Առ այդ մեր շնորհակալութիւնները կը յայտնենք:

ՀՐԱՉ ՍԻՍԵՌԵԱՆԻ 10.000 ՏՈԼԱՐԻ ՆՈՐ ՅԱՏԿԱՑՈՒՄԸ

Դպրոցի բարերարներէն փարիզաբնակ տիար Հրաչ Սիսերեան 2023-2024 կրթական տարեշրջանի իր տարեկան յատկացումը՝ 10.000 տոլար, փոխանցեց դպրոցին, իր սիրեցեալ ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսերեաններու բարի յիշատակին:

Առ այդ մեր շնորհակալութիւնները կը յայտնենք:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՂ ԸԼԼԱՅ ՅՈՅՄԻ ԱՂԲԻՐ ԲՈԼՈՐԻՍ ՀԱՄԱՐ:
ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ: ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ:



Կադանդի տոնակատարություններ
(8 - 22 Դեկտեմբեր)





Երկուշաբթի 12 Փետրուարին ՀԱԳ-ի ամբողջ ընտանիքը նշեց Սրբոց Վարդանանցի եւ Բարեկենդանի տօները: Օրը սկսաւ պաշտամունքով, որուն ընթացքին աշակերտները ելոյթ ունեցան ասմունքներով: Տնօրէն Արմէն Իւրնէշեան իր պատգամը կառուցեց Նուարսակի դաշնագիրը կանխող շրջանին վրայ՝ չլուսահատելու, ինչպէս նաեւ հոգեւին, մտովին ու ֆիզիքապէս յաղթանակի պատրաստուելու գաղափարը շեշտելով՝ անցեալէն այսօրուան համար դասեր քաղելով: Ապա ան երկրորդականի աշակերտներուն հետ զրոյց ունեցաւ «ո՛վ է հայը» նիւթով, առաւելաբար զիրենք լսելով:

Օրը շարունակուեցաւ ժամանցային պահերով նուիրուած Բարեկենդանին՝ խաղերով, հիւրասիրութեամբ, ձեռային աշխատանքով եւ ծպտումով, երգ ու պարով:

Վարձքը կատար Գործունէութիւններու յանձնախումբին եւ դաստիարակ ուսուցիչներուն, ինչպէս նաեւ Քաճեթերիայի կամաւոր տիկիներուն:





Սիրոյ տօնին առթիւ, 17 Փետրուարին, ուսուցչական Positive Vibes յանձնախումբը կազմակերպած էր Սիրոյ սեղան մը, որ առիթ եղաւ միասնաբար հաճելի ժամանց մը անցընելու:



7 Մարտին նշեցինք դպրոցի 100-րդ օրը, որ թէ՛ ուրախութեան, թէ՛ զԱստուած փառաւորելու առիթ էր, որ անվտանգ հասանք այս օրուան: Աշակերտներուն հիւրասիրուեցան համեղ dough-nut-ներ եւ մանաւանդ... այդ օրուան գրաւորները եղան գրքաբաց (open book): Վարձքը կատար բոլորին:



Ուսուցչաց տօնին առթիւ, 7 Մարտին 11-րդ դասարանի աշակերտները կազմակերպած էին ատենամարզանք մը, որուն ընթացքին անոնք երախտագիտական խօսքեր արտասանեցին, ինչպէս նաեւ ներկայացուցին տեսագրուած շնորհաւորական ուղերձներ շրջանաւարտներէ:

Իսկ յաջորդ օրը Ծնողաց մարմինը կէսօրուայ ճաշի հրաւիրած էր ուսուցիչները եկեղեցւոյ սրահին մէջ, առ ի երախտագիտութիւն անոնց աշխատանքին:



Ուսուցչաց ընկ. յանձնախումբը 14 Մարտի կէսօրին կազմակերպած էր ՄԻԶԻՆՔԻ ԱԻԱՆԴԱԿԱՆ ՀԱԻԱՔ մը ուսուցչարանին մէջ:



ԱՏԵՆԱՄԱՐԶԱՆԻ ՀԻՒՐԵՐ

ԱՆՊՈՍ



Գարմեն Աճեմեան



Դոկտ. Սիլվա Սայիլեան



Տիկ. Լենա Պաղտոյեան




Կիսամեայ քննութիւններ



ԱՆՍԻՄԱՆ ՀԱՅԵՆԸ
↑ Երկրորդական
↓ Նախակրթարան





Հայաստանի ամերիկեան համալսարանը (AUA) վերջերս պատուած է տէր եւ տիկ. Ալպեր (1956-ի շրջ.) եւ Թերի Պէզճեանները, որոնք առատաձեռնօրէն օժանդակած են համալսարանի կրթական ֆոնտին. առ այդ, համալսարանի քաֆիթերեան կոչուած է իրենց անունով: Պէզճեանները «Աւելի լաւ ապագայ՝ AUA-ի հետ» ծրագրին օժանդակած են եւ համալսարանի գիտութեան ու ճարտարապետութեան եւ ընկերային գիտութեանց ու արուեստներու 3 նոր շէնքերու կառուցումը յանձն առած են:




Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը Հիւսիսային Ամերիկա իր հովուական այցին, 15 Նոյեմբեր 2023-ին այցելած է AMAA-ի Փարամըսի կեդրոնը, ուր ի միջի այլոց իրեն ընդունողներուն մէջ եղած է Հիւս. Ամերիկայի Հայ աւետ. միութեան համակարգող, ՀԱԳ-ի նախկին աշակերտ վեր. Կալվին Սադրեան, որ խօսք առած է: Հանդիպումին ներկայ եղած է AMAA վարչական տիկ. Պերճոնի Պարսումեան-Կիլեսերեան (1965-ի շրջ.):



Մանսթրօ Կարօ Աւեսեան (1998-ի շրջ.) բեղուն երաժշտական գործունէութեան մէջ է: 7 եւ 11 Փետրուար 2024-ին Պոտսմիտշտի մէջ ղեկավարած է Տանիւպ սիմֆոնիք նուագախումբը: Հունգարիայէն առաջ՝ Յունուար 23-ին, Սէուտական Արաբիոյ MBC հեռուստատեսութեան հետ հարցազրոյց ունեցած է դասական երաժշտութեան եւ յատկապէս Պրամզի մասին, իսկ Դեկտեմբեր 23-ին եւ Յունուար 12-ին ղեկավարած է Լիբանանի ֆիլհարմոնիք նուագախումբը:

Դոկտ. Վահրամ Շէմնասեան (1969-ի շրջ.) 9 Փետրուար 2024-ին Հար. Քալիֆորնիոյ հայկական դպրոցներու հայերէնով դասաւանդող ուսուցիչներու աշխատանքային հաւաքին խօսած է «Կրօնքի եւ մշակոյթի միաժամանակ դասաւանդութիւնը» նիւթով: Ան 6 Ապրիլ 2024-ին UCLA-ի մէջ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանի նուիրուած խորհրդածրոյցին պիտի մասնակցի:



4 Նոյեմբեր 2023-ին ՀԲԸՄ-ի Լոս Անճելոսի «Հայ կին» կազմակերպութիւնը Նորթրիճ համալսարանի մեծ սրահին մէջ հայ համայնքին ծառայած 30 կիներ պատուած է, որոնց շարքին էին դատաւորուհի Կասիա Արգարեան (երկարամեայ նախկին աշակերտուհի) եւ «Հայ կին»-ի վարչական Սոնա Զէյթեան (1985-1989 ՀԱԳ-ի ուսուցչուհի):

Գինեգործական ընկերութեան տնօրէն, երեսնաւթնակ Վահէ Քէօշկերեան (1975-ի շրջ.) վերջերս արձանագրած է աննախադէպ յաջողութիւն իր արտադրած նոր փրփրագինիով, այսպէս Հայաստանը մտցնելով աշխարհի լաւագոյն տասնեակին մէջ, ըստ միջազգային դասաւորումի:




ԼԱՐՔ երաժշտական հաստատութեան տէր եւ տնօրէն երաժշտագէտ խմբավար Վաչէ Պարսումեան (1971-ի շրջ.) ԼԱՐՔ-ի մէջ գրադարան մը հաստատած է, որ վերջերս հարստացած է հանգուցեալ Արիս Մ. Սեւակի թողո՛ւն 5700 գիրքերով:



2023 Օգոստոսին Նոյեմբեր AMAA-ի Գանատայի ներկայացուցիչ Յարութ Ներսեսյան (ՀԱ-ի երկարամեայ նախկին աշակերտ) Ամերիկայի հայ աւետ. եկեղեցիներու ընկերակցութեան եօթը եկեղեցիներու մէջ AMAA-ի կիրակիներ վարած է, քարոզելով եւ AMAA-ի աշխարհատարած գործունէութեան մասին խօսելով:




AMAA-ի Հոկտեմբեր 2023-ի 104-րդ տարեկան ժողովին յառաջիկայ շրջանին համար եւս վարչական ընտրուած է տիկ. Պերճուհի Պարսումեան-Կիլեսերեան (1965-ի շրջ.):



Հայաստանի ազգային գրադարանը կը տեղեկացնէ, թէ դոկտ. Զաւէն Մարրլեանի (1955-ի շրջ.) գիրքերը թուայնացուցած են եւ կարելի է գրադարանի կայքէն փնտոել եւ տեսնել այդ գրքերը:

Տիկիններ Շողակ Յովհաննէսեան (ծն. Վարժապետեան, 1963-ի շրջ.) եւ Սեդա Նալպանտեան (ծն. Լօշ-խանեան, 1964-ի շրջ.) իբր համաատենապետներ AMAA-ի NY/NJ Orphan and Child Care վարչութեան, կազմակերպած էին յատուկ այցելութիւն մը դէպի Նիւ Եորքի Պրենսֆ հաստատութիւն, առ ի ծանօթացում արուեստագէտներ Jean-Michel Basquiat-ի եւ Andy Warhol-ի գործերուն: Գոյացած հասոյթը տրամադրուած է Արցախի հայ մանուկներուն:

1 – 3 Դեկտեմբեր 2023-ին Անթիլիասի Աղբալեան համալիրին մէջ ՀՄԸՄ-ի շրջանային ներկայացուցչական ժողովին երկարամեայ նախկին աշակերտ Վիգէն Մահտեսեան ընտրուած է Լիբանանի ՀՄԸՄ-ի շրջանային վարչութեան անդամ:




† 1953-ի շրջանաւարտուողի **Շաքէ Արսլանեան** (ծնեալ **Տոմպուրեան**), որ ամուսնոյն՝ հանգուցեալ Հայկ Արսլանեանի հետ դպրոցի բարերարներէն եղած է, 13 Դեկտեմբեր 2023-ին մահացած է Անվերսի (Պելճիքա) մէջ:




† 1984 – 1986 Ամերիկայի Արեւելեան Ափի ՀԱԳ-ի Ուսանողաց միութեան արեւնապետ **Գրիգոր (Բըրր) Սրմալըրքեան** (1939 – 2024), 11 Յունուար 2024-ին մահացած է Լոս Անճելըսի մէջ, յետ երկարաւրել հիւանդութեան:



† 1962-ի շրջանաւարտուողի **Սոնիա Շահինեան-Ալեմշահ** (1943 – 2023) Լոս Անճելըսի մէջ մահացած է 11 Դեկտեմբեր 2023-ին յետ երկարաւրել հիւանդութեան:



† Նախկին աշակերտ **Վարդգէս (Վիք) Թաքթաճեան** (1945 – 2023), Հիւսթընի մէջ մահացած է 18 Հոկտեմբեր 2023-ին:



† ՀԱԳ-ի նախկին երկարամեայ աշակերտուողի **Մակի Եղիայեան-Շեմմասեան** (1954 – 2023), մահացած է Լոս Անճելըսի մէջ, 31 Օգոստոս 2023-ին:



† Խմբավար **Գեորգ Պէպէճեան** (1949 – 2024), ՀԱԳ-ի երաժշտութեան նախկին ուսուցիչ (1982-83), 26 Փետրուար 2024-ին մահացած է Պէյրութի մէջ, ինքնաշարժի արկածի մը հետեւանքներէն:

† Մեծ յապաղումով տեղեկացանք, թէ 1963-ի շրջանաւարտուողի **Ալիծ ծն. Զերահեան** (1945 – 2022), Մոնթրէալի մէջ արկածով խեղդամահ եղած է իր բնակարանին մէջ:

ԲԱԽՏԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Երկարամեայ նախկին աշակերտուողի **Կասիա Գարակէօզեան-Շապանեան** 5 Յունուար 2024-ին բախտաւորուած է դուստրով մը՝ Միլա, ԱՄՆ-ի մէջ:

ՃՇԴՈՒՄ

«Լրարու»-ի նախորդ թիւին մէջ նշած էինք թէ Հրայր Պալեան (1966-ի շրջ.) անդամ ընտրուած է ԱՄՆ-ի Արեւմտեան Ափի ՀՅԴ համախոհական կեդր. կոմիտէին: Արդ նշենք, որ ինք չէ, այլ նոյն անունը կրող ուրիշ անձ մը:

ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիվն է վեր շնորհակալությամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները:

Բոլոր նուիրատուութիւնները կանխիկ տողարով են, բացի եթէ նշուած է այլապէս:

AMAA-Ի ՄԻՋՈՑՈՎ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱԳ 100-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Ստեփան Փիլիպոսեան Հիմնարկութիւն	25.000
Տոքթ. Արմէն Կեօնճեան	25.000
Տորիս եւ Արտա Մելքոնեան քոյրեր <i>ի պատիւ իրենց ծնողաց՝ ՀԱԳ-ի նախկին ուսուցիչներ</i>	
<i>Վեր. Յ. Մելքոնեանի եւ Ժանէթ Գույումճեան-Մելքոնեանի</i>	10.000
Տոքթ. Նազարէթ եւ Տոքթ. Անի Տարազճեան	10.000
Պրնք. Ժիլպեր, Ռոպեր եւ օրդ. Մարի Լուիզ Մենեշեան	10.000
Marilyn J. De Groot Charitable Trust	5000
Տոքթ. Հրաչ եւ տիկ. Սոնիա Տումանեան	5000
Տեր եւ տիկ. Թենէթ եւ Թելմա Գեորգեան	3500
Պր. Հայկ Կիլեսերեան	3500
Պր. Ալեքսանտր Սարգիսեան	2000
Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջանաւարտներ եւ բարեկամներ	1720
Տեր եւ տիկ. Կերի եւ Արսինէ Ֆիլիպս	1000
Տոքթ. եւ տիկ. Վիգէն եւ Սօսի Ահարոնեան	1000
Պր. Փոլ Քարլոզեան, <i>Վահէ Քարլոզեանի յիշատակին</i>	500
Պր. Արա Երեցեան	500
Պր. Չաւէն Խանճեան	500

ՊԵՅՐՈՒԹԻ 100-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ ԱՌԻԹՈՎ

Պր. Սերժ Պչաքճեան	500
-------------------	-----

100-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԱՅԼ ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դոկտ. Ճորճ Այնիլեան	2000
Տեր եւ տիկ. Չաւէն եւ Յասմիկ Մահսերեճեան	250
Վեր. եւ տիկ. Ներսէս եւ Սեւան Պալապանեան	200

ՏԱՐԵԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՄ

Տոքթ. Նազարէթ եւ տոքթ. Անի Տարազճեան	5000
--------------------------------------	------

ԵՌԱՄՍԵԱՅ ՅԱՏԿԱՑՈՒՄ AMAA-Ի

Յաւելեալ յատկացում դպրոցին եւ ուսուցիչներուն	4818
Անմիջական Բ. յատկացում դպրոցին	4818
Կրթաթոշակի Բ. յատկացում	12475

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՏԵՐԵՆԻՆ ԱՄԱՆՈՐԻ ԿՈՉԻՆ ԸՆԴԱՌԱՋՈՒՄ

Տիկ. Արփի Սարեան	500
Պր. Արեգ Մանուկեան	75

ԱՅԼ ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆ

Պր. Ռաֆֆի Աբոշեան	300
-------------------	-----

ՀԱԳ ԱՐԱ ՊԱԼԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ _ *Արա Պալեանի յիշատակին*

Տիկ. Սօսի Պալեան	100
Պր. Արմէն Պալեան	200
Տոքթ. Արման եւ դոկտ. Արաքս Գրիգորեան եւ զաւակուն	100
Պր. Ալեք եւ դոկտ. Շողակ Պալեան եւ զաւակունք	100
Օրդք. Արշակունիի եւ Լուսին Տեր Խաչատուրեան	50

Մ.Ա.Հ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԱՐ

HEKS-ի դպրոցին օժանդակութիւն	2900
------------------------------	------

Խմբագիր՝ ՏԵՐԵՆ ՊՈԿՏ. ԱՐՄԵՆ ԻՌԱՆԵՇԵԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻՐ ՆԵՐՍԵՍ ՊԱՌՏՈՅԵԱՆ
 ՏԻՐ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
 Էջադրում՝ ԱՆԻ ԲԵՍԵՆԵԱՆ ՊԱՍԵԹ
 Մ.Ա.Հ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵՐ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE

P.O. Box 3672-Beirut

Tel: 01 349 816 Fax: 01 751 469

E-mail: A_E_C@cyberia.net.lb

Website: aecbeirut.edu.lb

Facebook: Armenian Evangelical College